ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի N 1322 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N 923-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 10-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱԹԵՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 923-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) ցանկը 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով՝

«

7.	0202309008	Խոշոր եղջերավոր անասունի՝ գոմեշի սառեցրած, ոսկրահան արված միս՝ սննդամթերքի արտադրության համար	Խոշոր եղջերավոր անասունի՝ գոմեշի սառեցրած, ոսկրահան արված միս՝ սննդամթերքի արտադրության համար, տարբեր կարգի	կգ	650 000	Բրազիլիա, ԱՄՆ, Կանադա, ԵՄ, Հնդկաստան	Բրազիլիա, ԱՄՆ, Կանադա, ԵՄ, Հնդկաստան, Վրաստան	715 000 000	

».

2) ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «3 471 000 000» թիվը փոխարինել «4 186 000 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ